ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՆԱԽՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

h/h	Առաջարկի անվանումը	ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ		
		Առաջարկների բովանդակությունը (ներառյալ բյուջեն)	**Առաջարկի կարգավիճակը** • Ընդունվել է • Մերժվել է	**Մերժման դեպքում՝ հիմնավորումը**
1	Գրիբոյեդով գյուղի ոռոգման համակարգի բարեկարգում	Առաջարկում եմ վերանորոգել Գրիբոյեդով գյուղի վարելահողերը ոռոգող խողովակների վրայից բացակայով ջրթող փականները: Այդ խողովակներն ապահովում են ամբողջ գյուղի վարելահողերի ոռոգումը: Ներկայումս դրանց բացակայությունը մեծ խնդիր է ոռոքման աշխատանքները ճիշտ և ժամանակին կատարելու համար: Խողովակների վրայի փականների վերանորոգման արդյունքում կունենանք մեծ	Ընդունվել է	

		ջրախնայողություն:		
2	Գայ գյուղի կանգառների փոխարինում	Գայ գյուղի կանգառներն արդեն հնամաշ են, կոտրված և անբերեկարգ վիճակում:Անձրևոտ օրերին բնակիչները չեն կարողանում պատսպարվել և թրջվում են: Առաջարկում եմ փոխել կանգառները ավելի նոր և հարմարավետ դարձնել:	Ընդունվել է	
3	Գայ գյուղում ճանապարհի ասֆալտապատում	Գայ գյուղի Խաչատրյան 1 փողոցը գտնվում է անբարեկարգ վիճակում, երեխաները անձրևոտ օրերին դպրոց են գնում ջրափոսերի միջով, իսկ արևոտ օրերին՝ փոշու: Խաչատրյան 1 փողոցը գլխավոր ճանապարհին է կապում Խաղաղության և դրան հարակից փողոցները: Առաջարկում եմ ասֆալտապատել ճանապարհը, հետիոտներին առավել հարմարավետ դարձելու համար:	Ընդունվել է	
4	Խորոնք գյուղի դպրոցի ճանապարհի ասֆալտապատում	Անբարեկարգ ճանապարհի պատճառով անձրևոտ օրերին աշակերտները	Ընդունվել է	

		դժվարանում են հասնել դպրոց: Մ. Խորենացի փողոցը ամբողջությամբ ասֆալտապատած է ,իսկ դպրոց տանող ճանապարհը, որը գտնվում է Մ. Խորենացի փողոցից դեպի Վ. Տերյան 1 (որը կազմում է 110 մետր) գտնվում է անմխիթար վիճակում: Ուստի խնդրում ենք ասֆալտապատել Վ. Տերյան 1 տանող ճանապարհի հատվածը, քանի որ այս ճանապարհին է գտնվում Խորոնքի միջնակարգ դպրոցը:		

Մասնակցային բյուջետավորման գործընթացի

կառավարման հանձնաժողովի նախագահ՝ Պետրոս Ավագյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Մարիա Ազատյան